



Հաստատված է

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի նիստի որոշմամբ առ 11.09.2009 թ.

Խորհրդի Նախագահ
Գագիկ Զաքարյան

**Շինմոնտաժային ռիսկերի համապարփակ ապահովագրության
պայմաններ**

Երևան
2009

Բովանդակություն

1. Մահմանումներ
2. Ընդհանուր դրույթներ: Ապահովագրության մասնակիցներ
3. Ապավագրության օբյեկտ
4. Ապահովագրական ռիսկեր և դեպք
5. Ապահովագրական բացառություններ
6. Ապահովագրության տարածքը
7. Ապահովագրական գումար
8. Ապահովագրական վճար
9. Ապահովագրության պայմանագրերի կնքման կարգը
10. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը
11. Ապահովագրության պայմանագրի փոփոխումը, հավելվածները, ընդհատումը
12. Ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխումը
13. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները
14. Ապահովագրական վնասի հատուցման վճարումը և կարգը
15. Վեճերի լուծման կարգը

1. Սահմանումներ

- 1.1. **Ապահովագրող**՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ:
- 1.2. **Ապահովադիր**՝ Իրավաբանական կամ ֆիզիկական անձ՝ որպես ոչ իրավաբանական անձ հանդես եկող ձեռնարկատեր, որը Ապահովագրողի հետ սույն Ընդհանուր Պայմանների ներքո կնքել է ապահովագրության Պայմանագիր:
- 1.3. **Ապահովագրության պայմաններ**՝ Ապահովագրության պայմանգրին (այսուհետ՝ Պայմանագիր) կից տրված ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիր (Վկայագիր): Ապահովագրության պայմանները հանդիսանում են Պայմանագրի (Վկայագրի) անբաժանելի մասը:
- 1.4. **Ապահովագրության պայմանագիր**՝ (Ապահովագրության վկայագիր) Ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ Ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ Ապահովադիրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը): Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է ապահովագրության պայմանագրի անվավերությանը: Այդպիսի պայմանագիրն առ ոչինչ է: Օրենքով կարող են նախատեսվել ապահովագրության պայմանագրի կնքման նկատմամբ այլ պահանջներ:
- 1.5. **Ապահովագրության դիմում**՝ Ապահովագրողի պահանջով Ապահովադրի կողմից գրավոր տեղեկացումն է ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը որոշող էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին: Դիմումը կարող է լրացնել Ապահովագրողի ներկայացուցիչը Ապահովադրի հայտնած տեղեկությունների հիման վրա: Ապահովադիրը իր ստորագրությամբ հաստատում է դիմումում տեղ գտած տեղեկությունների ճշմարտացիությունը : Ապահովագրության դիմումը կազմում է Պայմանագրի (Վկայագրի) անբաժանելի մասը:
- 1.6. **Ապահովագրության ռիսկ**՝ Ապահովագրական ռիսկն առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է:
- 1.7. **Ապահովագրական պատահար**՝ Ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադիրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:
- 1.8. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրական գումարն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

- 1.9. **Ապահովագրավճար՝** Ապահովագրավճարն ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովադրի կողմից ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է:
- 1.10. **Չհատուցվող գումար՝** չհատուցվող գումարը ոչ կյանքի ապահովագրության դեպքում ապահովադրի մասնակցության չափն է վնասի հատուցմանը :
- 1.11. **Ապահովագրական ակտ՝** Ապահովադրի կողմից համաձայն Պայմանագրի և Ապահովագրության պայմանների անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ Ապահովագրողի կողմից կազմվող փաստաթուղթ, որը հանդիսանում է հատուցման հիմք՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում:
- 1.12. **Սուբրոգացիա՝** Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին կամ Ապահովագրված անձին պատճառված վնասից բխող վնաս պատճառած անձի նկատմամբ նրանց պահանջի իրավունքի փոխանցումը Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով::
- 1.13. **Շինարարական կապալի պայմանագիր (այսուհետ – Կապալի պայմանագիր)՝** Կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար: Կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր:
- 1.14. **Երաշխիքային ժամանակահատված (երաշխիքային սպասարկման ժամանակահատված/ հետգործարկման երաշխիքային պարտավորվածությունների ժամանակահատված)՝** Ժամանակահատված, որի ընթացքում Ապահովադիրը (կապալառուն) պարտավորվում է կատարել պայմանագրային պարտականությունները համաձայն կապալի պայմանագրի:
- 1.15. **Շինարարական աշխատանքներ՝** Մույն պայմանների համաձայն շինարարական աշխատանքներ են համարվում՝
- շենքերի և շինությունների կառուցումը, վերանորոգումը և վերակառուցումը, ինչպես նաև դրանց վերաբերվող աշխատանքները կապված երկաթբետոնե, մետաղական, փայտե և այլ շինարարական կառույցների մոնտաժման հետ;
 - ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էներգիայի մատակարարման ներքին և արտաքին ցանցերի կառուցման հետ կապված աշխատանքները;
 - կամուրջների, գետափների և ճանապարհի կառուցման հետ կապված աշխատանքներ ;
 - նավթատարների, գազատարների, օդային և մալուխային էլեկտրափոխանցման գծերի կառուցման հետ կապված աշխատանքներ ;
 - շենքերի և/կամ շինությունների կապիտալ վերանորոգման, վերակառուցման ընթացքում իրականացվող աշխատանքներ:

1.16. **Մոնտաժման աշխատանքներ`** Սույն պայմանների համաձայն մոնտաժային աշխատանքներ են համարվում`

–տեխնոլոգիական, էներգետիկ, ամբարձիչ-տրանսպորտային, պոմպային-կոմպրեսորային սարքավորումների մշտական շահագործման վայրում հավաքման և տեղադրման հետ կապված աշխատանքները, այդ թվում մոնտաժի որակի ստուգման և փորձարկման հետ կապված աշխատանքները:

–սարքավորումները` ջրի, օդի, գոլորշու, սառեցնող հեղուկների մոտեցնելու, մալուխների, էլեկտրական և կապի գծերի անցկացման և մոնտաժի հետ կապված աշխատանքներ:

–սարքավորումների հետ կոնստրուկտիվ ձևով կապված տեխնոլոգիական մետաղակոնստրուկցիաների, սպասարկող հարթակների, այլ շինությունների մոնտաժի և տեղադրման հետ կապված աշխատանքներ ;

–տեխնոլոգիական սարքավորումների ապամոնտաժման հետ կապված աշխատանքներ:

1.17. **Թերություն կամ խոտան`** Շինմոնտաժային աշխատանքների օբյեկտի տարրի անհամապատասխանությունը որևէ պարամետրի` նախագծով, տեխնիկական թղթաբանությամբ կամ այլ նորմատիվային փաստաթղթով (պետական ստանդարտներով, շինարարական նորմերով և կանոններով, և այլն) նախատեսված, բացառությամբ այն անհամապատասխանությունների որոնք նորմատիվներով թույլատրված են:

1.18. **Շինարարական կամ մոնտաժային աշխատանքների ընթացքում կատարված սխալներ`** անհամապատասխանությունը նախագծային փաստաթղթերի և շինմոնտաժային աշխատանքների միջև` շենքերի և (կամ) շինությունների շինարարության, վերակառուցման և կապիտալ վերանորոգման ժամանակ պարտադիր կատարման ենթակա տեխնիկական ընթացակարգի պահանջների, ինժինեռական հետազոտումների արդյունքների, շինարարական նորմերի և կանոնների, աշխատանքների անվտանգության կանոնների և այլ իրավական նորմատիվ ակտերի չկատարումը:

1.19. **Նախագծում առկա սխալներ (նախագծի փաստաթղթերի մշակման ընթացքում գոյացած սխալներ)`** նախագծի փաստաթղթերի անհամապատասխանությունը տեխնիկական կանոնակարգի պահանջներին, հակահրդեհային, արդյունաբերական և այլ անվտանգության, ինչպես նաև ինժինեռական հետազոտումների արդյունքների պահանջներին:

1.20. **Պատրաստում.** գործարանային պայմաններում գույքի, տեխնոլոգիական սարքավորումների հավաքում և ստեղծում,: Սույն Պայմանների սահմաններում գույքի պատրաստում չի հանդիսանում շինմոնտաժային հարթակում (հիմնական շահագործման վայրում) մշակման, հավաքման կամ տեղադրման աշխատանքները:

1.21. **Գողություն`** Սույն կանոնների համաձայն գողություն է համարվում անօրինական ներթափանցումով ապահովագրված գույքի գաղտնի առևանգումը: Սույն Պայմանների համաձայն անօրինական ներթափանցումով գողություն է համարվում, եթե երրորդ անձը (հանցագործը).

–կիրառելով ագռավուկներ, կեղծ բանալիներ կամ տեխնիկական այլ միջոցներ թափանցում է փակ տարածք` բացելով դռները կամ պատուհանները: Կեղծ բանալի են

համարվում այն բանալիները, որոնք պատրաստվել են բնօրինակ բանալիները տնօրինելու իրավունք չունեցող անձանց կողմից, հիմնադրությամբ կամ հանձնարարությամբ: Գույքի առևանգման փաստը ապահովագրված տարածքից բավարար չէ, որպեսզի ապացուցվի կեղծ բանալիների օգտագործումը: Ազդավուկների և կեղծ բանալիների օգտագործման փաստը հաստատվում է համապատասխան պետական լիազոր մարմնի պաշտոնական եզրակացության հիման վրա:

– ազդավուկների, կեղծ բանալիների և(կամ) այլ գործիքների օգնությամբ կամ կոտրելով բաց են անում շինության սահմաններում գտնվող այն առարկաները, որոնք օգտագործվում են որպես գույքի պահեստ:

– բռնագրավում են առարկաներ փակ տարածություններում, ուր ներթափանցել են սովորական ճանապարհով, թաքնվել են մինչև տարածքի փակվելը այնուհետև օգտագործելով ազդավուկներ, կեղծ բանալիներ և(կամ) այլ տեխնիկական միջոցներ դուրս են եկել տարածքից իրենց հետ տանելով բռնագրաված առարկաները: Կամ փակ տարածություններում բռնագրավում են առարկաներ հատուկ սարքավորումների միջոցով՝ առանց այդ տարածությունը ներթափանցելու:

– վնաս է հասցնում շենքի կոնստրուկտիվ տարրերին (պատերին, ծածկերին, տանիքին և այլն) և ներթափանցում են փակ տարածք շենքի կոնստրուկտիվ տարրերում ստեղծած արանքներից (վնասվածք):

Բացի վերը թվարկվածից սույն Պայմանների համաձայն անօրինական ներթափանցումով գողություն է համարվում գույքի կամ նրա բաղադրիչների գաղտնի բռնագրավումը, որը իրականացվել է առանց ապահովագրված տարածք կամ պահեստ ներթափանցելու, բայց կապված է երրորդ անձի (հանցագործի) ապահովագրված գույքին վնաս հասցնելու հետ: Ապահովագրված է նաև այն գույքը կամ նրա տարրերը, որն իր ֆունկցիոնալ նշանակությամբ գտնվում է ապահովագրված տարածքի կամ պահեստի սահմաններից դուրս, բայց ապահովագրված տարածքում: Օդային և մալուխային էլեկտրական գծերը, կապի գծերը, որոնց միջոցով իրականացվում է էլեկտրաէներգիայի կամ տեղեկատվության փոխանցումը:

2. Հիմնական դրույթներ. Ապահովագրության մասնակիցները

- 2.1. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրողը ՀՀ օրենսդրությանը համաձայն կնքում է շինմոնտաժային աշխատանքներից բխող ռիսկերի կոմբինացված ապահովագրության պայմանագրեր իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և այլ աշխատունակ ֆիզիկական անձանց հետ(այսուհետ՝ Ապահովադիր):
- 2.2. Ապահովագրությունը կարող է իրականացվել ինչպես շինմոնտաժային աշխատանքների ընթացքում (ներառյալ գործարքային աշխատանքները), այնպես էլ օբյեկտի շահագործման երաշխիքային սպասարկման ընթացքում:
- 2.3. Շինմոնտաժային աշխատանքներից բխող ռիսկերի ապահովագրության պայմանգիրը կարող է կնքվել հօգուտ այն անձի (ապահովադրի կամ շահառուի), որը օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի:

Ապահովադրի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված գույքի ապահովագրության պայմանագիրն անվավեր է:

Ապահովագրության պայմանգիրը համարվում է կնքված Պատվիրատուի և/կամ Կապալառուի (ենթակապալառուի) օգտին՝ ապահովագրված գույքի այն մասով, որով նա կրում է ոչնչացնալու, կորցնելու, կամ վնասելու ռիսկը:

- 2.4. Եթե Ապահովագրության պայմանագրով ապահովագրված է շինմոնտաժային աշխատանքների կամ երաշխիքային սպասարկման ընթացքում քաղաքացիական պատասխանատվությունը, ապա քաղաքացիական պատասխանատվության Ապահովագրության պայմանգիրը համարվում է կնքված այն անձանց օգտին, որոնց կարող է վնաս հասցվել (տուժածներ):

Անձը, որի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության ռիսկն ապահովագրվել է, պետք է նշվի ապահովագրության պայմանագրում: Եթե այդ անձը պայմանագրում նշված չէ, ապա ապահովագրված է համարվում ապահովադրի պատասխանատվության ռիսկը:

- 2.5. Սույն Պայմանների համաձայն ապահովագրության մասնակից է համարվում Ապահովագրողը, Ապահովադիրը և Շահառուն:

3. Ապահովագրության օբյեկտները

- 3.1. Ապահովագրության օբյեկտն ապահովագրման ենթակա գույքային և անձնական շահերն են:

3.1.1. Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով Ապահովադրի պարտավորվածությունը փոխհատուցել վնասը՝ հասցված երրորդ անձանց կյանքին, առողջությանը, կամ գույքին՝ ապահովագրության պայմանագրում նշված շինմոնտաժային աշխատանքների ժամանակ:

3.1.2. Ապահովադրի շահերը՝ կապված չնախատեսված ծախսերի հետ, որոնք առաջացել են ավարտված օբյեկտի Պատվիրատուի ընդունումից հետո երաշխիքային սպասարկման ընթացքում, ինչպես նաև Ապահովադրի գործունեության ընդմիջման ծախսերը՝ կապված շինարարական օբյեկտի շահագործման հետ, օբյեկտը շահագործման հանձնելուց հետո:

- 3.2. Համաձայն սույն Պայմանների, ապահովագրմանը ենթակա են.

3.2.1. **«Շինմոնտաժային աշխատանքներ»** - շինությունները, շենքերը, տեխնոլոգիական սարքավորումները (այսուհետ «շինմոնտաժային աշխատանքների օբյեկտ»), որոնք կառուցվում են շինմոնտաժային աշխատանքների (այդ թվում նոր շինարարության, կապիտալ վերանորոգման, վերակառուցման և այլն) ընթացքում: Կողմերի համաձայնությամբ կարող են նաև ապահովագրված լինել Պատվիրատուի կողմից մատակարարվող և շինմոնտաժային աշխատանքների ընթացքում կիրառվող

միջոցները և տեխնոլոգիական սարքավորումները, որոնք բացակայում են կապալի պայմանագրում,:

- 3.2.2. **«Շինհրապարակի սարքավորում»** – շինհրապարակի սարքավորում (ժամանակավոր շենքեր և շինություններ, պահեստային շինություններ, կողապատում, շինարարական անտառ, ժամանակավոր ինժեներային կոմունիկացիաներ և այլն):
- 3.2.3. **«Շինարարական տեխնիկա»** - շինարարական մեքենամեխանիզմներ, որոնք օգտագործվում են շինմոնտաժային աշխատանքների ժամանակ (մասնավորապես էքսկավատորներ, բուլդոզերներ, գրեյդերներ, սկրեպեր, ուղեգլաններ, ասֆալտադարսիչներ, վերամբարձ կռունկներ, ամբարձիչներ, բարձիչներ, բետոնամերսիչներ, գողման սարքավորումներ, տրանֆորատորներ, կոմպրեսորներ, ցցագերանների ֆունդամենտների համար սարքավորումներ և այլ նմանատիպ գույք):
- 3.2.4. **«Գոյություն ունեցող գույք»** – շինհրապարակում գտնվող գույք, որը պատկանում է Ապահովադիրին (կապալառուին) սեփականության կամ այլ օրինական հիմքերով, բացի այն օբյեկտներից, որոնք նշված են սույն Պայմանների 3.2.2., 3.2.3. կետերում:
- 3.2.5. **«Երրորդ անձանց համար քաղաքացիական պատասխանատվություն»** Ապահովադիրը կարող է կնքել ապահովագրության պայմանագիր, որով ապահովագրվում է շինմոնտաժային աշխատանքների կամ շահագործման հանձնված օբյեկտի երաշխիքային սպասարկման ընթացքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի պատասխանատվության ռիսկը:
- 3.2.6. **«Հետգործարկման երաշխիքային պարտավորվածություններ»** – Չնախատեսված ծախսեր, որոնք ի հայտ են եկել ավարտված շինարարական օբյեկտի երաշխիքային սպասարկման ընթացքում՝ Պատվիրատուի կողմից պատվերի ընդունումից հետո:

Սույն պայմաններով ապահովագրության օբյեկտ չի հանդիսանում և հատուցման ենթակա չէ կապալառուի պատասխանատվությունը՝ Պայմանագրով և Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված երաշխիքային սպասարկման ժամանակահատվածի ընթացքում:

- 3.2.7. **«Ձեռնարկատիրական գործունեության ընդհատման հետևանքով կրած կորուստները»** – ֆինանսական կորուստներ, որոնք ի հայտ են գալիս ապահովագրական պատահար տեղի ունենալու հետևանքով.

ա/ շահույթը, որը Ապահովադիրը չի ստացել ապահովագրական պատահար տեղի ունենալու հետևանքով:

բ/ մշտական ծախսեր, որոնք անխուսափելիորեն կրում է Ապահովադիրը կապված իր գործունեության հետ, չնայած այն բանին, որ իր ձեռնարկատիրական գործունեությունը ընդհատվել է կամ անորոշ ժամանակով հետաձգվել է:

գ/ Ապահովադրի նպատակային և արդարացված ծախսերը ուղղված ապահովագրական պատահարի հետևանքները մեղմելուն:

- 3.3. Ապահովագրությունը կարող է իրականանալ ինչպես բոլոր խմբերի գույքային շահերի, այնպես էլ սույն պայմաններով նախատեսված գույքային շահերի յուրաքանչյուր տեսակի համար:

4. Ապահովագրական պատահարներ և ապահովագրական ռիսկեր

- 4.1. Սույն Պայմանների 3.2.1.-3.2.4. կետերում նշված օբյեկտները շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում ապահովագրվում են «բոլոր ռիսկերի համար պատասխանատվության» պայմաններով (ռիսկ «բոլոր ռիսկեր»): «Բոլոր ռիսկերի համար պատասխանատվությունը» ապահովագրության պայմաններով ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված գույքի կորուստը, վնասը, , որը չի բացառվել Ապահովագրության պայմանագրով և սույն Պայմանների կետ 5-ով:

- 4.1.1. «Բոլոր ռիսկերի համար պատասխանատվության»պայմաններով Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել տարածքի մաքրման ծախսերի փոխհատուցումը գույքի ջարդոններից՝ առաջացած ապահովագրական պատահարի հետևանքով շինմոնտաժային աշխատանքների ապահովագրման ժամանակ:

- 4.2. Ապահովադրի՝ երրորդ անձանց համար քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ ապահովագրական պատահար է հանդիսանում երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասը՝ Ապահովագրության պայմանագրում նշված շինմոնտաժային աշխատանքների ժամանակ ,այն դեպքում ,երբ՝

- 4.2.1. Ապահովադիրը (անձը՝ ում պատասխանատվության ռիսկն ապահովագրված է) վնասի տարածքում գործող օրենսդրության համաձայն պարտավոր է փոխհատուցել այն:

- 4.2.2. Երրորդ անձանց հասցված վնասը կապված է Ապահովագրության Պայմանագրում նշված շինմոնտաժային աշխատանքների հետ և(կամ) ծագել է շահագործման հանձնված օբյեկտի երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:

- 4.2.3. Դեպքը, որի հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցվել է վնաս, տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված տարածքի սահմաններում:

- 4.2.4. Վնասի հասցման փաստը և նրա չափը ընդունվել է Ապահովադրի կողմից կամավոր՝ երրորդ անձանց գույքային պահանջներով, որոնք առաջ են քաշվել համաձայն պատճառած վնասի տարածքում գործող օրենսդրության և հաստատված են դատարանի՝ վնասի փոխհատուցման վճռով:

Սույն պայմաններով երրորդ անձանց առողջությանը և կյանքին վնաս է համարվում մարմնական վնասվածքները, գործունակության կորուստը կամ տուժածի մահը:

Սույն Պայմանների համաձայն երրորդ անձանց գույքի վնաս է համարվում տուժածի գույքի կորուստը կամ վնասը:

- 4.3. Երրորդ անձանց քաղաքացիական պատասխանատվության Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել երրորդ անձանց կյանքի, առողջության, կամ գույքի հասցված վնասի փոխհատուցումը, որը առաջացել է շահագործման հանձնված օբյեկտի երաշխիքային սպասարկման ընթացքում:
- 4.4. Քաղաքացիական պատասխանատվության Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել Ապահովադրի՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու հետևանքով պայմանավորված անհրաժեշտ և նպատակային ծախսերի փոխհատուցումը.
 - 4.4.1. Երրորդ անձանց հասցված վնասի չափի որոշման համար անցկացված անկախ փորձաքննության հետ կապված ծախսեր:
 - 4.4.2. Դատական ծախսերի, բացառությամբ փաստաբանի (ներկայացուցչի) ծախսերի:
- 4.5. Սույն Պայմանների համաձայն, երրորդ անձ է համարվում Ապահովադրի հետ պայմանագրային հարաբերություններ չունեցող, չհամագործակցող և փոխկապակցված չհամարվող անձը, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:
- 4.6. Երաշխիքային սպասարկման ընթացքում ապահովագրությունը իրականացվում է «Երաշխիքային Սպասարկում» ռիսկի ապահովագրական պատահարների համար: Սույն ռիսկով ենթակա են փոխհատուցման չնախատեսված ծախսերը՝ կապված շինմոնտաժային աշխատանքների օբյեկտի վնասվածքների, կործանման, վերացման (նրա մասերի կամ կոնստրուկցիաների) հետ, ինչը ծագել է երաշխիքային սպասարկման ժամկետի ընթացքում և կապված է շինմոնտաժային աշխատանքների սխալների կամ խոտանի հետ, կամ շինմոնտաժային օբյեկտի երաշխիքային սպասարկման աշխատանքների հետ: Նշված ծախսերը Ապահովագրողի կողմից ենթակա են փոխհատուցման, բացառությամբ այն ծախսերի, որոնք կապված են շինմոնտաժային աշխատանքների օբյեկտի մասերի կամ կոնստրուկցիաների վերակառուցման (ներառյալ նյութերը և աշխատանքները) հետ, որոնք ուղղակիորեն պատճառ են հանդիսացել շինմոնտաժային օբյեկտի վնասի կամ կործանման համար:

5. Ապահովագրական բացառություններ

- 5.1. Սույն Պայմանների համաձայն ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չեն ծախսերը, որոնք առաջացել են..
 - 5.1.1. ռազմական գործողությունների, ռազմական մանևրների, այլ ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի հետևանքով:
 - 5.1.2. զանգվածային խռովությունների կամ գործադուլների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:
 - 5.1.3. միջուկային պայթյունի, ճառագայթման ազդեցության հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

- 5.1.4. պետական կառույցների կողմից կատարված բռնագրավման, բռնագանձման կամ ապահովագրված գույքի ոչնչացման հետևանքով առաջացած ծախսերը:
- 5.1.5. ահաբեկչական գործողությունների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:
- 5.1.6. Ապահովադրի (Շահառուի) միտումնավոր գործողությունների հետևանքով:
- 5.1.7. Ապահովադրի աշխատակիցների կողմից սարքավորումների անվտանգ շահագործման, աշխատանքների անվտանգ իրականացման, հակահրդեհային կանոնների չկատարումը, շինարարական նորմերի, այլ նորմատիվային կանոնների և փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են շինմոնտաժային աշխատանքները, օգտագործվող նյութերի որակի վերահսկողության բացակայությունը՝ շինարարական տեխնիկայի և սարքավորման վիճակի, կամ վերը նշված անձանց իմացությամբ կամ կարգադրությամբ իրագործվող նորմերի և կանոնների չկատարումը:

Այնուամենայնիվ, փոխհատուցվում է այն վնասը, որը տեղի է ունեցել Ապահովադրի աշխատակիցների կողմից(որոնք պատասխանատու չեն աշխատանքների անվտանգ իրագործման համար) հակահրդեհային կանոնների, շինարարական և այլ նմանատիպ նորմերի չկանխամտածված խախտման հետևանքով: Այն պայմանով, որ պատասխանատու անձինք հավանական ծախսերի կանխման նպատակով, կատարել են իրենց վրա դրված բոլոր պարտականությունները՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները ապահովագրված գույքի նկատմամբ (մասնավորապես տեղեղեկացրել են անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային տեխնիկայի, աշխատանքների իրագործման կանոնների մասին, ապահովագրական տարածքը համալրել են հակահրդեհային տեխնիկայով, որը համապատասխանում է գործող նորմատիվներին, վերահսկել են շինարարական տեխնիկայի և սարքավորումների տեխնիկական վիճակին և այլն):

- 5.1.8. աշխատանքների ամբողջական կամ մասնակի հետևանքով: Աշխատանքների ամբողջական ընդհատում համարվում է շինմոնտաժային աշխատանքների ֆինանսավորման ընդհատումը անորոշ ժամանակով և անավարտ շինարարության օբյեկտների կոնսերվացումը: Աշխատանքների մասնակի ընդհատում է համարվում շինմոնտաժային աշխատանքների ժամանակավոր ընդհատումը (որը տևում է յոթ օրացուցային օրից մինչև երեք ամիս) ֆինանսավորման դադարեցման, նախագծում փոփոխությունների ներառման և այլ պատճառներով:
- 5.1.9. Ապահովագրված օբյեկտի կամ այլ ապահովագրված գույքի սխալների կամ խոտանների հետևանքով, որոնց մասին Ապահովադիրը (Շահառուն) տեղյակ էր մինչև ապահովագրական պատահարի վրա հասնելը, բայց որի մասնի չէր տեղեկացրել Ապահովագրողին:
- 5.1.10. Այն պատահարների, որոնք տեղի են ունեցել ապահովագրական տարածքից դուրս կամ Ապահովագրության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո:
- 5.1.11. Ապահովադրի (Շահառուի) աշխատակիցների կամ այն անձանց գործողությունների հետևանքով, որոնք Ապահովադրի (Շահառուի) իմացությամբ տնօրինում կամ օգտագործում են ապահովագրված գույքը, լինելով ալկոհոլոյաին, թմրադեղային կամ

թունավոր աղդեցության տակ, ինչպես նաև այն դեղերի ազդեցության տակ, որոնց օգտագործումը հակացուցված է:

5.2. Սույն Պայմանների կետ 3.2.2.-3.2.4. նշված շինարարական օբյեկտների ապահովագրության ժամանակ ապահովագրական պատահար չեն համարվում և ենթակա չեն հատուցման:

5.2.1. ծախսերը, որոնք սույն Պայմանների կետ 5.1.-5.1.11.-ի հետևանք են:

5.2.2. տույժեր, տուգանքներ, բաց թողնված շահույթ, կորուստ՝ ժամկետի ուշացման պատճառով, շինարարական աշխատանքների պայմանագրի չեղյալ հայտարարման և այլ նմանատիպ կորուստները, որոնց փոխհատուցումը նախատեսված չէր ապահովագրության պայմանագրով:

5.2.3. տույժեր, որոնք ի հայտ են եկել ապահովագրված գույքի վնասից կամ կորստից այն սխալների պատճառով, որոնք թույլ էին տրվել օբյեկտի շինարարության ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:

5.2.4. շինարարական աշխատանքների ժամանակ թույլ տված թերությունների վերացման համար կատարված ծախսերը: Մակայն այս բացառությունը վերաբերվում է միայն վնասված խոտանային նյութերին և առարկաներին, բայց չի տարածվում այն պատրաստի նյութերի կամ առարկաների վրա, որոնց օգտագործելուց սխալներ են թույլ տրվել շինարարական աշխատանքների ժամանակ, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:

5.2.5. ինքնաբռնկման, խմորման, փտման, կոռոզիայի կամ ապահովագրված գույքի այլ բնական հատկանիշների հետևանքով, ինչպես նաև եղանակի պայմանների պատճառով ապահովագրված գույքի արժեքի նվազեցման հետևանքով առաջացած վնասները:

5.2.6. Վնասները որոնք տեղի են ունեցել ապահովագրված գույքի պակասուրդի, անհետացման, բռնագանձման հետևանքով, բայց կողոպուտի, գողության և թալանի հետևանք չեն, նաև վնասվածքները և վնասները որոնք հայտնաբերվել են գույքագրման ընթացքում:

5.2.7. Վնասներ կապված շինարարական տեխնիկայի և շինհրապարակի սարքավորումների ոչնչացման կամ վնասի հետ, որը հետևանք է ներքին անսարքությունների, հովացնող և այլ հեղուկների սառեցման, անորակ յուղման կամ յուղի և հովացնող հեղուկի բացակայության հետ, միևնույն ժամանակ, եթե այդպիսի վնասվածքների հետևանքով հասցված է վնաս ուրիշ ապահովագրված իրերին, ապա այդպիսի վնասը ենթակա է հատուցման;

5.2.8. Օդային և ջրային տրանսպորտի վնասման կամ ոչնչացման հետ կապված կորուստներ և վնասներ, ինչպես նաև վնասներ՝ կապված ընդհանուր օգտագործման ճանապարհների համար նախատեսված տրանսպորտային միջոցների հետ, որոնք նախատեսված չեն շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար:

5.2.9. Վնասներ կապված տեխնիկական, հաշվապահական, նախագծային փաստաթղթերի, գծագրերի, լուսանկարների, նմուշների, մակետների, թղթադրամի, դրամական

միջոցների, արժեթղթերի, փաթեթավորման նյութերի, համակարգչային ծրագրերի և տվյալների ոչնչացման հետ, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրում:

- 5.2.10. Կորուստներ կապված քիմիկատների, դյուրավառ նյութերի, հովացնող հեղուկների, կատալիզատորների և այլ օգտագործվող նյութերի, ինչպես նաև ապահովագրված օբյեկտի արտադրած ապրանքի ոչնչացման հետ:
 - 5.2.11. Ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասի հետևանքով առաջացած վնասներ, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակ, այնպիսի պատճառներով, որոնք ի հայտ են եկել մինչև ապահովագրության պայմանագրի կնքումը, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով;
 - 5.2.12. Գոյություն ունեցող գույքի կորստի կամ ոչնչացման վնասներ՝ վիբրացիայի, հենքերի թուլացման կամ հեռացման, ստորգետնյա ջրերի մակարդակի նվազելու, թունելների անցկացման և այլ շինմոնտաային աշխատանքների իրականացման հետևանքով, որոնք ընդգրկում են հիմքային տարրեր կամ ստորգետնյա շերտեր (գրունտ), եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:
 - 5.2.13. Վնասներ՝ տաքության անմիջական ազդեծության հետևանքով հրակայուն նյութերի ոչնչացման կամ վնասման պատճառով:
 - 5.2.14. Վնասներ, որոնք շինարարական տեխնիկայի հետևանքն են, որը օգտագործվում է ստորգետնյա աշխատանքների համար, վնասման կամ ոչնչացման՝ ջրհեղեղի, խորտակման, սողանքի, փլուզման, հողի նստեցման, փլվածքների հետևանքով:
- 5.3. Մոնտաժի, ինչպես նաև, սույն պայմանների կետ 3.2.2.-3.2.4. նշված օբյեկտների ապահովագրության ժամանակ, ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝
- 5.3.1. Վնասներ որոնք տեղի են ունեցել սույն պայմանագրի 5.1. – 5.1.11. կետերում նշված պատճառներով,
 - 5.3.2. տույժեր, բաց թողնված շահույթ, վնասներ հետաձգման հետևանքով, խախտումներ, մոնտաժային աշխատանքների պայմանագրի դադարեցում և նմանատիպ ոչ ուղղակի վնասներ, որոնց հատուցումը նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով,
 - 5.3.3. վնասներ, ապահովագրության օբյեկտին հասցվաց վնասից կամ ոչնչացումից, այնպիսի սխալների հետևանքով, որոնք առաջացել են նախագծման, խոտանավոր նյութերի օգտագործման, արտադրական թերությունների, բացառությամբ մոնտաժի սխալների, եթե այլ բան չի նախատեսված Ապահովագրության պայմանագրում:
 - 5.3.4. վնասներ՝ մաշվածության, ժանգոտման, օքսիդացման, ինքնաբռնկման, նյութերի հոգնածության, գույքի այլ բնական և հատուկ հատկությունների ազդեծության, ինչպես նաև գույքի արժեքի նվազեցում եղանակային պայմանների ազդեծության հետևանքով:

- 5.3.5. վնասները, որոնք տեղի են ունեցել ապահովագրված գույքի պակասուրդի, անհետացման, բռնագանձման հետևանքով, բայց հետևանք չեն կողոպուտի, գողության և թալանի, նաև վնասվածքները և վնասները, որոնք հայտնաբերվել են գույքագրման ընթացքում:
- 5.3.6. երրորդ անձանց հակաօրինական գործողություններ, որոնք համաձայն ապահովագրության վայրի գործող քրեական և քաղաքացիական օրենսգրքի, սահմանվում են այլ կերպ, քան գույքի դիտավորյալ ոչնչացում կամ վնասում, բարբարոսություն, խուլիգանություն;
- 5.3.7. վնասներ կապված շինարարական տեխնիկայի և շինարարական հարթակի սարքավորումների ոչնչացման կամ վնասի հետ, որը հետևանք է ներքին անսարքությունների հովացնող և այլ հեղուկների սառեցման, անորակ յուղման կամ յուղի և հովացնող հեղուկի բացակայության հետ, միևնույն ժամանակ, եթե այդպիսի վնասվածքների հետևանքով հասցված է վնաս ուրիշ ապահովագրված իրերին, ապա այդպիսի վնասը ենթակա է հատուցման:
- 5.3.8. օդային և ջրային տրանսպորտի վնասման կամ ոչնչացման հետ կապված կորուստներ և վնասներ, ինչպես նաև վնասներ կապված ընդհանուր օգտագործման ճանապարհների համար նախատեսված տրանսպորտային միջոցների հետ, որոնք նախատեսված չեն շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար:
- 5.3.9. վնասներ կապված տեխնիկական, հաշվապահական, նախագծային փաստաթղթերի, գծագրերի, լուսանկարների, նմուշների, մակետների, թղթադրամի, դրամական միջոցների, արժեթղթերի, փաթեթավորման նյութերի, համակարգչային ծրագրերի և տվյալների ոչնչացման հետ, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրում:
- 5.3.10. կորուստներ կապված քիմիկատների, դյուրավառ նյութերի, հովացնող հեղուկների, կատալիզատորի և այլ օգտագործվող նյութերի, ինչպես նաև ապահովագրված օբյեկտի արտադրած ապրանքի ոչնչացման հետ:
- 5.3.11. ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասի հետևանքով առաջացած վնասներ, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակ, այնպիսի պատճառներով որոնք ի հայտ են եկել մինչև ապահովագրության պայմանագրի կնքումը, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով;
- 5.3.12. գոյություն ունեցող գույքի կորստի կամ ոչնչացման վնասներ՝ վիբրացիայի, հենքերի թուլացման կամ հեռացման, ստորգետնյա ջրերի մակարդակի նվազելու, թունելների անցկացման և այլ շինմոնտաժային աշխատանքների իրականացման հետևանքով, որոնք ընդգրկում են հիմքային տարրեր կամ ստորգետնյա շերտեր (գրունտ), եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:
- 5.3.13. վնասներ, որոնք առաջացել են տաքության անմիջական ազդեցության հետևանքով, հրակայուն նյութերի ոչնչացման կամ վնասման պատճառով:

5.4. Երրորդ անձանց նկատմամբ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ ապահովագրական պատահար չեն հանդիսանում և ենթակա չեն հատուցման.

- 5.4.1. վնասները, որոնք տեղի են ունեցել սույն Պայմանների 5.1. – 5.1.11 կետերում նշված պատճառներով,
- 5.4.2. վնասը, որը հասցվել է երրորդ անձանց սեփականությանը, որը ապահովագրված է կամ կարող է լինել ապահովագրված սույն Պայմանների 3.2.1. – 3.2.4. կետերին համապատասխան,
- 5.4.3. կյանքի և առողջության վնասը, որը հասցված է Ապահովադրի(Շահառուի) աշխատակիցներին, իր ընտանիքի անդամներին, բաժնետերերին և իրավաբանական անձ-Ապահովադրի մասնակիցներին, Ապահովադրի դուստր և կախյալ ձեռնարկության, ինչպես նաև Ապահովադրի (Շահառուի) գույքին հասցված վնասը,
- 5.4.4. վնասը, որը հասցված է կամ ի հայտ է եկել շրջակա միջավայրի աղտոտման (օդի, ջրի, հողի), բացառությամբ, եթե այն հասցված է հանկարծակի, անսպասելի, չկանխամտածված և անկանխատեսելի դեպքի հետևանքով, որը տեղի է ունեցել ապահովագրության ժամանակահատվածում,
- 5.4.5. վնասը որը հասցված է՝ պատվիրատուի, կապալառուի (որը չի հանդիսանում Ապահովադիր, Շահառու) կամ ուրիշ կազմակերպության՝ զբաղված ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների արտադրությամբ, աշխատակիցների կյանքին կամ առողջությանը,

Սույն Պայմանների շրջանակներում, պատվիրատուի, կապալառուի կամ այլ կազմակերպության աշխատակից են համարվում քաղաքացիներ, որոնք պատվիրատուի, կապալառուի կամ այլ կազմակերպության հետ գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ և իրականացնում են աշխատանքներ նրա հանձնարարությամբ:

- 5.4.6. վնասը՝ հասցված Պատվիրատուին կամ Կապալառուին(Ապահովադիր(Շահառու) չհանդիսացող) պատկանող գույքին , ինչպես նաև կողմնակի կազմակերպության գույքի, որը իրականացնում է ապահովագրված շինմոնտաժային աշխատանքները, այդ կազմակերպության աշխատակիցներին, պատվիրատուին կամ կապալառուին (որը չի հանդիսանում Ապահովադիր (Շահառու)) եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,
- 5.4.7. օդային և ջրային տրանսպորտի վնասման կամ ոչնչացման հետ կապված կորուստները և վնասները, ինչպես նաև վնասներ կապված ընդհանուր օգտագործման ճանապարհների համար նախատեսված տրանսպորտային միջոցների հետ, որոնք նախատեսված չեն շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար,
- 5.4.8. հատուցումներ վճարելու պարտականությունները, որոնք ստանձնել է Ապահովադիրը կամավոր կերպով, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանատվությունը գոյություն ունի օրենքի սահմաններում,

- 5.4.9. բաց թողնված շահույթը, երրորդ անձանց անուղղակի կորուստներ, տույժեր տուգանքներ, բարոյական վնասը,
 - 5.4.10. վնասը, որը հասցվել է երրորդ անձանց առողջությանը կամ գույքին վիբրացիայի, հենքերի թուլացման կամ հեռացման հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով,
 - 5.4.11. վնասը, որը հասցվել է երրորդ անձանց պատկանող ստորգետնյա հաղորդալարերին, խողովակներին կամ այլ ստորգետնյա կառույցներին, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով,
- 5.5. Հետզործարքային երաշխիքային պարտականության ապահովագրության ժամանակ Ապահովագրական պատահար չեն հանդիսանում և հատուցման ենթակա չեն.
- 5.5.1. վնասները, որոնք տեղի են ունեցել սույն Պայմանների 5.1. – 5.4.11 կետերում նշված պատճառներով,
 - 5.5.2. շինմոնտաժային աշխատանքների օբյեկտի բաղադրիչ մասերի, խոտանների վերացման ծախսերը, որոնք հանդիսանում են կամ կարող են հանդիսանալ Ապահովագրական պատահարի պատճառ,
 - 5.5.3. շինմոնտաժային օբյեկտի նախագծման ընթացքում թույլ տված սխալների հետևանքով առաջացած վնասները,
 - 5.5.4. ցանկացած անանցյալ վնասներ, մասնավորապես բաց թողնված շահույթ կամ պայմանագրային տույժեր,
 - 5.5.5. Վնասներ, որոնք ի հայտ են եկել ապահովագրված օբյեկտի մեջ արտադրվող կամ վերամշակվող ապրանքների վնասման կամ ոչնչացման հետևանքով,
 - 5.5.6. սեփականատիրոջ կամ նրա կողմից հրավիրված երրորդ անձանց կողմից շինմոնտաժային օբյեկտի ոչ պատշաճ շահագործման կամ վերանորոգման հետևանքով կրած վնասները,
- 5.6. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել նաև ուրիշ ապահովագրական բացառություններ:

6. Ապահովագրության տարածքը

- 6.1. Ապահովագրության տարածք է հանդիսանում Ապահովադրի կողմից կամ նրա պատվերով տարվող շինմոնտաժային աշխատանքների (շինհրապարակի, շինության, կամ շենքում տարածքի) անցկացման վայրը ՀՀ ամբողջ տարածքում:
- 6.2. Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել ապահովագրության տարածքի ընդլայնումը, մասնավորապես.

ա/ պահեստային տարածքի, որը գտնվում է շինհրապարակից դուրս և նախատեսված է շինմոնտաժային աշխատանքների համար;

բ/ շինարարական նյութերի և տեխնոլոգիական սարքավորման տեղափոխման ճանապարհային հատվածից մինչև շինհրապարակ:

7. Ապահովագրական գումար

- 7.1. Ապահովագրական գումարն ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:
- 7.2. Սույն ապահովագրության համար պահանջվում է, որ պայմանագրում նշվող ապահովագրական գումարները լինեն ոչ պակաս, քան աշխատանքների ավարտման պահին շինարարական աշխատանքների լրիվ արժեքը, ներառելով՝ վարձատրությունը, նյութերի արժեքը, փոխադրման ծախսերը, մաքսատուրքերը, տուրքերը, ինչպես նաև կառուցախրավ անձի կողմից մատակարարվող նյութերի և շինարարական տարրերի արժեքը, նույն տեսակի և նույն կարողության ապահովագրված իրերի գնման և շինարարական հրապարակի և շինարարական մեքենաների սարքավորումների վերանորոգման արժեքները: Բացի այդ Ապահովագրողը պարտավորվում է բարձրացնել կամ իջեցնել ապահովագրական գումարները աշխատավարձի կամ գների էական փոփոխությունների դեպքում, ընդ որում բարձրացումը կամ իջեցումը ուժի մեջ է՝ Ապահովագրողի կողմից համապատասխան գրավոր լրացումը կատարելուց հետո:

Եթե վնասի առաջացման դեպքում բացահայտվի, որ ապահովագրական գումարները անհրաժեշտից ցածր են, ապա հատուցման չափը, սույն պայմանագրի շրջանակներում, նվազում է փաստացի և անհրաժեշտ ապահովագրական գումարների հարաբերակցության չափով: Սույն դրության գործողությունը տարածվում է յուրաքանչյուր իրի և ծախսային հոդվածի վրա:

8. Ապահովագրավճար

- 8.1. Ապահովագրավճարն ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովագրողի կողմից ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է:
- 8.2. Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրավճարը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական գումարից և ապահովագրական սակագնից:
- 8.3. Ապահովագրական գումարը արտարժույթով սահմանելու դեպքում ապահովագրավճարը ևս հաշվարկվում է այդ արժույթով: Այդ պարագայում ապահովագրավճարը կարող է վճարվել ինչպես արտարժույթով, այնպես էլ ապահովագրավճարի վճարման օրվա դրությամբ համապատասխան արտարժույթի համար ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքով հաշվարկված ՀՀ դրամով (ապահովագրության պայմանագրով ապահովագրավճարի հետաձգված վճարում նախատեսելու դեպքում)

Արտարժույթով վճարման ենթակա ապահովագրավճարը կլորացվում է մինչև մոտակա ամբողջ թիվը:

ՀՀ դրամով վճարման ենթակա ապահովագրավճարը կլորացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան մինչև ճշգրիտ ամբողջ թիվը:

- 8.4. Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել ոչ պայմանական չհատուցվող գումար (Ոչ պայմանական չհատուցվող գումարը Ապահովադրի անձնական մասնակցությունն է վնասի հատուցմանը: Եթե ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովադրին (Շահառուին) վճարման ենթակա գումարը չի գերազանցում ոչ պայմանական չհատուցվող գումարը, Ապահովագրական ընկերությունն ազատվում է վճարում կատարելու պարտավորությունից): Ոչ պայմանական չհատուցվող գումարը սահմանելու դեպքում, յուրաքանչյուր ապահովագրական պատահարի ժամանակ վճարվելիք ապահովագրական հատուցման գումարը նվազեցվում է ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով:
- 8.5. 12 ամսից պակաս ժամկետով կնքված ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ ապահովագրության պայմանագրի կնքմանը հաջորդող 2 բանկային օրվա ընթացքում:
- 8.6. 12 ամիս ժամկետով կնքված ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարը կարող է վճարվել միանվագ կամ կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրով նախատեսված պարբերականությամբ՝ երկու փուլով, ամեն եռամսյակ, ամեն ամիս և այլն:

Երկու փուլով ապահովագրավճարի վճարման դեպքում դրա առաջին մասը ընդամենը ապահովագրավճարի կեսից ոչ պակաս չափով վճարվում է ապահովագրության պայմանագրի կնքմանը հաջորդող 2 բանկային օրվա ընթացքում: Ապահովագրավճարի մնացած մասը վճարվում է մինչև ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի կեսը:

Ապահովագրավճարի եռամսյակային վճարման դեպքում դրա առաջին մասը ապահովագրավճարի 1/4 մասից ոչ պակաս չափով վճարվում է ապահովագրության պայմանագրի կնքման պահին: Ապահովագրավճարի մնացած մասը վճարվում է հավասար չափերով ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրվանից ոչ ուշ:

Ապահովագրավճարը ամեն ամիս վճարելու դեպքում դրա առաջին մասը՝ ապահովագրավճարի 1/12-ից ոչ պակաս չափով վճարվում է ապահովագրության պայմանագրի կնքման պահին: Ապահովագրավճարի մնացած մասը վճարվում է հավասար չափաբաժիններով ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի յուրաքանչյուր ամսվա վերջին օրվանից ոչ ուշ:

9. Ապահովագրության պայմանագիրը և կնքման կարգը

- 9.1. Ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների)

տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

- 9.2. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է ապահովագրության պայմանագրի անվավերությանը: Այդպիսի պայմանագիրն առ ոչինչ է: Օրենքով կարող են նախատեսվել ապահովագրության պայմանագրի կնքման նկատմամբ այլ պահանջներ:
- 9.3. Ապահովագրության իրականացման դեպքում ապահովագրության պայմանագրի առկայությունը պարտադիր է: Ապահովագրության վկայագիրը կարող է փոխարինել ապահովագրության պայմանագրին, եթե այն պարունակում է ապահովագրության պայմանագրի՝ սույն գլխով և օրենքով սահմանված էական պահանջները:
- 9.4. Ապահովագրության պայմանագրի և (կամ) վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում ապահովագրողը պարտավոր է ապահովադրի դիմումով և վերջինիս տրամադրել պայմանագրի և (կամ) վկայագրի կրկնօրինակը:

10. Ապահովագրության պայմանագրի գործունեության ժամկետը

- 10.1. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Պայմանագրով կարող է նախատեսվել, որ ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովադրի կողմից ապահովագրավճարն ամբողջությամբ կամ պայմանագրով նախատեսված չափով վճարելու պահից:
- 10.2. Ապահովագրության պայմանագիրը տարածվում է ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած ապահովագրական դեպքերի վրա:
- 10.3. Շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակահատվածի ընդլայնման և համապատասխանաբար երաշխիքային սպասարկման ժամկետի փոփոխության դեպքում ապահովագրության ժամկետը նույնպես կարող է փոփոխվել, եթե Ապահովադիրը լրացուցիչ ապահովագրավճար է վճարում՝ Ապահովագրողի համաձայնությամբ: Ընդ որում, Ապահովագրողը և Ապահովադիրը կնքում են լրացուցիչ պայմանագիր, որում համաձայնեցնում են շինմոնտաժային աշխատանքների և երաշխիքային սպասարկման նոր ժամկետներ՝ ապահովագրավճարին համարաժեք վերահաշվարկով:
- 10.4. Եթե Ապահովադրից (Շահառու) անկախ պատճառներով (ֆինանսավորման դադարեցում և այլն) աշխատանքները կանգնեցվել են յոթ օրից մինչև երեք ամիս ժամկետով, ապա Ապահովադրողի համաձայնության դեպքում Ապահովագրության Պայմանագրի գործողության ծամկետը կարող է երկարացվել համապատասխան ժամանակով, առանց լրացուցիչ ապահովագրավճարի: Այս դեպքում Ապահովագրողը և Ապահովադիրը կնքում

են պայմանագրին կից նոր համաձայնագիր, որտեղ համաձայնեցվում են ապահովագրության նոր ժամկետները: Ընդ որում, շինմոնտաժային աշխատանքների ընթացքում երրորդ անձանց վնասը չի համարվում Ապահովագրական պատահար:

- 10.5. Եթե շինմոնտաժային աշխատանքները ավարտվել են Ապահովագրության ժամկետում նշված ժամկետից շուտ, ապա ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ:

11. Ապահովագրության պայմանագրի կնքումը, գործողության ժամկետը և դադարումը

- 11.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի համաձայն, Ապահովագրողը պարտավորվում է պայմանագրով նախատեսված վճարի (ապահովագրավճարի) վճարման դիմաց Ապահովագրության պայմանագրով նախատեսված պատահարի(ապահովագրական պատահար) առաջ գալու դեպքում Ապահովադրին կամ նրա կողմից նշանակված անձին, որի օգտին կնքված է Ապահովագրության պայմանագիրը, (Շահառուին) հատուցել ,Պայմանագրում նշված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում , ապահովագրված գույքին հասցրած վնասների դիմաց (վճարել ապահովագրական հատուցումը): Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել միայն օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով հիմնավորված ապահովագրվող գույքի պահպանման մեջ շահագրգռված անձի օգտին (սեփականատեր, վարձակալ, գրավառու, տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման իրավունքով գույքը տնօրինող անձիք և այլն): Անվավեր է համարվում այն ապահովագրության պայմանագիրը, որը կնքվել է Ապահովադրի(Շահառուի) կողմից ապահովագրվող գույքի պահպանման նկատմամբ շահ չհետապնդելու դեպքում:

Դիմումը ներկայացնելիս Ապահովադիրը համապատասխան փաստաթղթերի ներկայացմամբ պետք է հիմնավորի ապահովագրվող գույքի նկատմամբ իր իրավունքները և շահերը (Շահառուի իրավունքները և շահերը):

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է սույն Պայմանների համաձայն՝ Ապահովադրի կողմից Պայմանները Պայմանագրին կցելու ճանապարհով: Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից ստացված Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա և նրանց կողմից ստորագրված Վկայագիրը հանձնելով:

- 11.2. Ապահովագրության պայմանագրում կատարվող բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր ձևով, և լրացուցիչ համաձայնությունը ստորագրվում է Կողմերի կողմից:

- 11.3. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագիրը կորցնելու դեպքում Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողը Ապահովադրին է հանձնում ապահովագրության պայմանագրի կրկնօրինակը, որից հետո կորցված պայմանագիրը համարվում է անվավեր և ապահովագրական հատուցումներ ըստ դրա չեն կատարվում:

Ապահովագրության պայմանագրի կրկնօրինակը կորցնելու դեպքում երկրորդ և բոլոր հաջորդ կրկնօրինակները ստանալու համար Ապահովադիրը Ապահովագրողին վճարում է ապահովագրության պայմանագրի պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը:

11.4. Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում՝

- 11.4.1. 11.4.1. Ապահովադրի կողմից ապահովագրավճարի կանխիկ վճարման դեպքում կողմերի համաձայնությամբ Ապահովագրողի(նրա ներկայացուցչի) ամբողջ ապահովագրավճարի կամ դրա մի մասի ստացման կամ ստացման օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ցանկացած օրվա 00 ժամ 00 րոպեից,
- 11.4.2. 11.4.2. անկանխիկ փոխանցման դեպքում կողմերի համաձայնությամբ ամբողջ ապահովագրավճարի կամ դրա մի մասի՝ Ապահովագրողի(նրա ներկայացուցչի) հաշվարկային հաշվին փոխանցման օրվանից, կամ Ապահովագրողի(նրա ներկայացուցչի) հաշվարկային հաշվին ամբողջ ապահովագրավճարի կամ դրա մի մասի փոխանցման օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ցանկացած օրվա 00 ժամ 00 րոպեից,
- 11.4.3. 11.4.3. բանկային պլաստիկ քարտերի օգտագործմամբ ապահովագրավճարի վճարման դեպքում՝ ամբողջ ապահովագրավճարի կամ դրա մի մասի փոխանցման գործարքը կատարելու օրվանից, որի հաստատումն է հանդիսանում չեկ-քարտը և/կամ այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են քարտային հաշվից ապահովագրավճարի փոխանցումը, կամ քարտային հաշվով փոխանցման գործարքի կատարման օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ցանկացած օրվա 00 ժամ 00 րոպեից,

Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու օրն ու ժամը նշվում է Ապահովագրության պայմանագրում(վկայագրում):

11.5. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն ավարտվում է Ապահովագրության պայմանագրում որպես Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը լրանալու օր հանդիսացող օրվա ժամը 24:00-ից:

11.6. Ապահովագրության պայմանագիրը դադարում է

- 11.6.1. դրա գործողության ժամկետը լրանալու դեպքում,
- 11.6.2. Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
- 11.6.3. Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետներում ապահովագրավճարի հերթական չափաբաժինը չվճարելու դեպքում:

Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել, որ ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետներում ապահովագրավճարի հերթական չափաբաժնի չվճարման դեպքում ապահովագրության պայմանագիրը շարունակում է գործել նախկին պայմաններով մնացորդային պարտքը մարելու Ապահովադրի՝ գրավոր ձևով համաձայնության առկայության դեպքում, համաձայն որի ապահովագրավճարի հետաձգված գումարը ենթակա չէ վճարման հետաձգման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում

ապահովագրավճարի հետաձգված գումարի չվճարման դեպքում Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է 30-օրյա ժամկետի վերջին օրվան հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից, որի ընթացքում Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրավճարի հետաձգված մասը: Այդ պարագայում Ապահովադիրը չի ազատվում ապահովագրության պայմանագրի 30-օրյա ժամկետի ընթացքում ապահովագրավճարի վճարման պարտականությունից: Եթե ապահովագրական պատահարը վրա է հասել ապահովագրավճարի հերթական չափաբաժնի վճարումից առաջ, որի վճարումը հետաձգված էր, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվի առնել ապահովագրավճարի չվճարված մասի գումարը և Ապահովադիրին վճարվող գումարից նվազեցնել այն,.

11.6.4. Ապահովադիր (Շահառուի) մահվան դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադիր(Շահառուի) իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են գույքը ժառանգության կարգով ստացած անձին,

11.6.5. գրավոր կարգով ձևակերպված՝ Ապահովագրողի և Ապահովադիրի փոխադարձ համաձայնությամբ,

11.6.6. . Ապահովագրության պայմանագիրը կարող է դադարեցվել մինչ ապահովագրության ծամկետի ավարտը, եթե վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի տեղի ունենալու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի առկայությունը դադարել է այլ պատճառներով քան ապահովագրական պատահարն է (օրինակ ապահովագրված գույքի ոչնչացում այլ պատճառներով քան ապահովագրական պատահարի առաջ գալու):

Ընդ որում, Ապահովագրողը իրավասու է պահանջել ապահովագրավճարի ապահովագրության գործողության ժամկետի նկատմամբ համամասնական չափը :

11.6.7. Ապահովադիրը կամ Շահառուն իրավունք ունեն ցանկացած պահին հրաժարվել ապահովագրության պայմանագրից, ընդ որում Ապահովադիրի կողմից վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

11.6.8. Ապահովագրության պայմանագիրը Ապահովագրողի պահանջով կարող է դադարեցվել մինչ ապահովագրության ծամկետի ավարտը, պայմանով որ այդ պահանջը պայմանավորված է Ապահովադիրի կողմից սույն Պայմանների կամ Ապահովագրության պայմանագրի պայմանների խախտմանը, ընդ որում Ապահովագրողը ապահովադիրին է վերադարձնում չօգտագործված ժամանակահատվածի համար վճարված ապահովագրավճարը՝ հանած Ապահովագրողի կողմից կրած ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով: Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մտադրության մասին Ապահովադիրը պետք է գրավոր կերպով տեղեկացնի Ապահովագրողին ապահովագրության պայմանագրի դադարեցման ենթադրվող ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

11.7. Գույքը համարվում է ապահովագրված միայն Ապահովագրության պայմանագրում նշված տարածքում (ապահովագրության գործունեության տարածք): Եթե ապահովագրված գույքը

տեղափոխվում է մեկ այլ տարածք, Ապահովագրության պայմանագիրը այդ տեղափոխված գույքի նկատմամբ չի գործում, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:

- 11.8. Ապահովադիրը կարող է կնքել Ապահովագրության պայմանագիր հոգուտ երրորդ անձի (Շահառուի):
- 11.9. Ապահովադիրը իրավունք ունի փոխարինել Ապահովագրության պայմանագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ այդ մասին գրավոր կերպով տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով Ապահովագրության պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության կատարումից կամ Ապահովագրողին ապահովագրական հատուցում կատարելու պահանջ ներկայացնելուց հետո:
- 11.10. Շահառուի օգտին ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում Ապահովագրվողը չի ազատվում այդ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով, կամ եթե վերջինիս պարտավորությունները կատարված չեն Շահառուի կողմից:
- 11.11. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր՝ պայմանագրի հավելվածների, հանաձայնագրերի տեսքով, և պետք է վավերացվեն կողմերի ստորագրություններով և կնիքներով:

12. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական ռիսկի մեծացման հետևանքները

- 12.1. . Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած այն հանգամանքների փոփոխության մասին, որոնք հաղորդվել են Ապահովագրողին պայմանագրի կնքման ընթացքում , եթե այդ փոփոխությունները կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:
- 12.2. Ռիսկի մեծացման վրա ազդող փոփոխությունները նրանք են որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել ապահովագրական վկայագրում և Ապահովադիրին փոխանցված ապահովագրության Պայմաններում.
 - պայմանագրային աշխատանքների ժամկետների փոփոխությունները,
 - աշխատանքների լիովին կամ մասնակի ընդհատումը,
 - ապահովագրած գույքի վայրի փոփոխությունները,
 - կապալառուի (ենթակապալառուի) փոփոխումը,
 - նախագծի կամ աշխատանքների տեխնոլոգիաների փոփոխությունները, որոնք հանգեցնում են վթարի ավելացմանը,

- կապալի պայմանագրի մեջ փոփոխությունները, ներառումը, Ապահովագրական գումարի ավելացումը;

- ապահովագրված շինարարական տեխնիկայի՝ վարձույթի հանձնումը և այլն:

- 12.3. Ապահովագրողը հինգ օրվա ընթացքում պարտավորվում է ուսումնասիրել Ապահովագրի դիմումը ռիսկի չափի փոփոխությունների հետ կապված: Ապահովագրողը, որը տեղեկացվել է ռիսկի չափի փոփոխությունների պայմանների մասին, իրավունք ունի պահանջել Ապահովագրության Պայմանագրի պայմանների փոփոխությունների կամ ապահովագրավճարի հավելյալ վճարում, որը համաչափ կլինի ավելացված ռիսկին:
- 12.4. Եթե Ապահովագրի հրաժարվում է հավելավճարից կամ Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխումից, ապա սա դիտվում է որպես Ապահովագրի կողմից պայմանագիրը խզելու համաձայնություն: Կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համարվում է խզված այդ պահից:
- 12.5. Եթե Ապահովագրի չի տեղեկացրել Ապահովագրողին փոփոխված պայմանների մասին, որոնք հանգեցրել են ռիսկի ավելացմանը, և, եթե այս պայմանները հետագայում հանգեցրել են ապահովագրական պատահարի, ապա պայմանագիրը համարվում է խզված, այդ փոփոխությունները վրա հասնելուն պես:
- 12.6. Ապահովագրողն իրավունք չունի խզել պայմանագիրը, եթե Ապահովագրի տեղեկացնելու պահին ապահովագրական ռիսկը ավելացնող պայմանները վերացել են:

13. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

13.1. Ապահովագրի իրավունք ունի՝

- 13.1.1. նշանակել ապահովագրական հատուցում ստացող(Շահառուին), որը ունի ապահովագրված գույքի նկատմամբ պահպանման շահ, ինչպես նաև փոխարինել նրան մինչև ապահովագրական պատահարի վրա հասնելը,
- 13.1.2. պայմանագրում փոփոխություններ անել սույն ,
- 13.1.3. հրաժարվել Ապահովագրության պայմանագրից ,
- 13.1.4. Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան կրած վնասի չափով ստանալ ապովագրական հատուցում,բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարը :

13.2. Ապահովագրի պարտավոր է՝

- 13.2.1. տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի բոլոր հանգամանաքների մասին, որոնք կարող են էական նշանակություն ունենալ ապահովագրական պատահարի և հավանական վնասների տեղի ունենալու վրա , եթե նման հանգամանաքների մասին մասին Ապահովագրողը տեղյակ չէր կամ չէր կարող տեղյակ լինել: Էական են համարվում այն հանգամանաքները, որոնց մասին հստակ նշված է եղել Ապահովագրության պայմանագրում և ապահովագրության համար դիմումում:

- 13.2.2. տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրության բոլոր պայմանագրերի մասին կապված ապահովագրական օբյեկտի հետ;
- 13.2.3. ժամանակին Ապահովագրողին վճարել ապահովագրավճարը: Ապահովադիրը պարտավոր է պահպանել ապահովագրավճարի վճարումը հաստատող փաստաթուղթը և ներկայացնել Ապահովագրողի պահանջով,
- 13.2.4. եթե պայմանագիրը կնքվում է Շահառուի օգտին, ապա գրավոր տեղեկացնել Շահառուին ապահովագրության պայմանագրի կարգի և ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ Ապահովագրողի հետ համագործակցության մասին: Ապահովագրության պայմանագրի կնքումը Շահառուի օգտին չի ազատում Ապահովադիրին իր պայմանագրային պարտավորություններից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, կամ Ապահովադիրի պարտավորությունները պետք է կատարվեն Շահառուի կողմից:
- 13.2.5. հետևել անվտանգության հնարավոր բոլոր չափանիշներին, հետևել Ապահովագրողի բոլոր խորհուրդներին և(կամ) հրահանգներին կապված վնասը կանխելուն, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրության պահանջներին և նորմատիվներին ընդունված համապատասխան շինմոնտաժային աշխատանքների տեսակների համար, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների ժամանակ կիրառվող նյութեր արտադրողների խորհուրդներին:
- 13.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է պատահարի, որը ունի ապահովագրական պատահարի հատկանիշներ, տեղի ունենալու ժամանակ
- 13.3.1. Պայմանագրի պայմանների համաձայն վնասների հատուցումը նվազեցնելու բոլոր հնարավոր միջոցներ ձեռք առնել, ինչպես նաև փորձել փրկել գույքը և կանխել նրա հետագա վնասման պատճառները;
- 13.3.2. ապահովել պատահարի փաստի հաստատումը և նրա փաստաթղթերով հիմնավորված ձևակերպումը (պատահարի փաստը, պատճառը և հետևանքները, վնասի չափը), կազմել պատահարին համապատասխան ակտեր, դիմել համապատասխան մարմիններին (ոստիկանություն, հրշեջ ծառայություն, հիդրոմետոլոգիայի և այլ),
- 13.3.3. անհապաղ, ոչ ուշ քան 72 ժամվա ընթացքում պատահարի մասին տեղեկանալուց հետո, այդ մասին տեղեկացնել նաև Ապահովագրողին՝ կտա տեքստի և ամսաթվի հստակ փոխանցման (ֆաքս, հեռախոս, հեռագիր)միջոցով: Ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունը.
- ապահովագրության պայմանագրի համարն ու ամսաթիվը,
 - օբյեկտի ամբողջական անունը, որտեղ վնասը տեղի է ունեցել;
 - շինարարական հրապարակի հասցեն/հասցեները, որտեղ վնասը տեղի է ունեցել ,
 - վնասի ծագման ամսաթիվը և ժամը (եթե այն հայտնի է),
 - տեղեկություն այն պայմանների մասին, երբ պատահարը տեղի է ունեցել,
 - պատահարի կրճատ նկարագրությունը,
 - այլ տեղեկություններ որոնք Ապահովադիրը(Շահառուն) նպատակահարմար է գտնում հայտնել,
 - ուղարկողի անունը և ծանուցման ամսաթիվը,

Տվյալ պարտավորությունը համարվում է պատշաճ ձևով կատարված, եթե պատահարի մասին ծանուցումը արվել է Ապահովագրողի այն հասցեով, որոնք նշված են Ապահովագրության պայմանագրում, ինչպես նաև ֆաքսի այն համարով և Ապահովագրողի այն բաժանմունքի հասցեով, որով Ապահովադիրը ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ պետք է դիմի համաձայն Ապահովագրության պայմանագրում տեղ գտած տեղեկատվության:

- 13.3.4. պահպանել վնասված ապահովագրված գույքը այն վիճակում, որում այն հայտնվել է ապահովագրական պատահարից հետո մինչև Ապահովագրողի կողմից գնումը: Տվյալ կետի չպահպանումը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե այն պայմանավորված է վնասի չափի նվազեցման կամ անվտանգության նկատառումներով: Այն դեպքում, երբ օբյեկտի ապամոնտաժումն անհրաժեշտ է, ապա վնասված կամ կործանված տարրերը պետք է ֆիքսվեն նկարների, էսքիզների, կամ տեսաժապավենի միջոցով, որոնք իրենց հերթին պետք է փոխանցվեն Ապահովագրողին հատուցումը պահանջելու համար,
- 13.3.5. Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում ,պատահարի պատճառների ձևակերպման և վնասի չափի որոշման համար անհրաժեշտ փաստաթղթերը (սույն Պայմանների կետ 14.1 – 14.2.),
- 13.3.6. Ապահովագրողին հնարավորություն ընձեռել իր մասնակցությունը ունենալու վնասի չափի որոշման և հետաքննության ընթացքին ինչպես Ապահովագրողի հետ միասին, այնպես էլ ինքնուրույն, ապահովել պատահարի հետ կապված բնօրինակ փաստաթղթերի ստանալու , քննելու, պատճենահանելու, նկարահանելու հնարավորությունը, ինչպես նաև հարցաքննելու յուրաքանչյուր աշխատակցին, ով տեղյակ է գործի հանգամանքներից. վնասված օբյեկտների և պատահարի վայրի ստուգման հնարավորություն, հետաքննելու վնասի պատճառի ծագումը և որոշելու նրա չափերը,
- 13.3.7. ապահովագրված գույքի վնասի համար պատասխանատվություն կրող երրորդ անձանց առկայության դեպքում (որոնք Ապահովադրի, Շահառուի աշխատակիցները չեն) հայտնել նրանց մասին Ապահովագրողին և փոխանցել նրան բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են իրականացնելու պահանջի իրավունքը մեղավոր անձի նկատմամբ,
- 13.4. Ապահովադիրը պարտավոր է, երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցրած պատահարի տեղի ունենալու ժամանակ իրականացնել այն գործողությունները, որոնք նշված են սույն Պայմանների կետ 13.3.1-13.3.7-ում, ինչպես նաև.
 - 13.4.1. 72 ժամվա ընթացքում գրավոր` տեքստի և ամսաթվի(ֆաքս, հեռագիր) փոխանցման միջոցով Ապահովագրողին տեղեկացնել երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հատուցման գրավոր պահանջի մասին` Ապահովագրողին տրամադրելով գույքային պահանջների փաստաթղթերը, դատական դիմումները, դատարանի գործի լուսմների մասին նշանակումը և այլ նման փաստաթղթեր,ինչպես նաև Ապահովագրողին տեղեկացնել դատական գործի ընթացքի, դատական լուսմների և այլնի մասին;
 - 13.4.2. Ապահովագրողին տրամադրել լիազորագիր Ապահովադրի անունից երրորդ անձանց պահանջները կարգավորելու համար,

- 13.4.3. Ապահովագրողին սատարել առաջադրված վնասի հատուցման պահանջների կարգավորման ընթացքում, և եթե Ապահովագրողը անհրաժեշտ է գտնում նշանակել իր իրավաբանին կամ այլ լիազոր անձին պաշտպանելու Ապահովագրողի շահերը՝ նրանց հանձնել համապատասխան լիազորագրեր կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր,
- 13.4.4. առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության չխոստանալ և չառաջարկել կամավոր կարգով վնասի ամբողջական կամ մասնակի հատուցում կատարել, եթե այն դատարանի որոշումով պարտադրված չէ, իր վրա չվերցնել որևէ պարտավորություն կարգավորելու երրորդ անձանց կողմից առաջադրված պահանջները,
- 13.4.5. Ապահովագրողին տեղեկացնել այն հնարավորության մասին, երբ կարելի է պահանջել երրորդ անձանց հատուցման ընհատումը, և ձեռնարկել բոլոր միջոցները նման հատուցումները ընդհատելու կամ կրճատելու համար;
- 13.4.6. փոխանցել Ապահովագրողին բոլոր փաստաթղթերը և հայտնել նրան բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին պատասխանատու կողմից ապահովագրության պայմանագրում նշված հատուցումը պահանջելու իրավունքի իրականացման համար:

13.5. Ապահովագրողն իրավունք ունի.

- 13.5.1. պայմանագիրը կնքելիս անցկացնել հետաքննություն և պահանջել անհրաժեշտ տեղեկություններ,
- 13.5.2. ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ստուգել ապահովագրված գույքի վիճակը, ինչպես նաև ապահովագրության պայմանագրի կնքման ընթացքում Ապահովագրողի կողմից հաղորդված տեղեկությունների ճշտությունը, շինարարական նորմերի, անվտանգության տեխնիկայի կատարումը, պահանջել ապահովագրված օբյեկտի հետ կապված տեխնիկական փաստաթղթերը, և գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրողին (Շահառուին) բացահայտված խախտումների վերաբերյալ և նրանց վերացման մասին խորհուրդներ տալ;
- 13.5.3. ապահովագրական հատուցումը հետաձգել.
- եթե ապահովագրված գույքի վնասի, կորստի փաստով հարուցվել է քրեական գործ կամ հետաքննություն է տարվում համապատասխան մարմինների կողմից, մինչև դատարանի վճիռ կայացնելը, քրեական գործի դադարեցնելը կամ հետաքննության ավարտը,
 - եթե Ապահովագրողը ոչ պատշաճ ձևով է ներկայացրել ձևակերպված փաստաթղթերը (մասնավորապես չվավերացված փաստաթղթեր, փաստաթղթեր, որոնք ստորագրված են ոչ լիազորված անձանց կողմից և այլն) մինչև պատշաճ ձևով փաստաթղթերի տրամադրումը,
 - եթե Ապահովագրողը համապատասխան մարմիններից պահանջել է բացատրություններ ապահովագրական պատահարի պատճառի, հանգամանքների և հետևանքների ծագման վերաբերյալ - մինչև հարցերին գրավոր պատասխաններ ստանալը:

13.5.3. Շահառուից պահանջել պարտավորությունների կատարումը, ներառյալ այն պարտավորությունները, որոնք Ապահովադրին են վերաբերվում, բայց նրա կողմից չկատարված, Շահառուի հատուցման պահանջ ներկայացնելու պահին:

13.6. Ապահովագրողը պարտավոր է՝

13.6.1. ծանոթացնել Ապահովադրին սույն Պայմանների հետ,

13.6.2. չիրապարակել իր մասնագիտական գործունեության ընթացքում Ապահովադրի(Շահառուի) գույքային վիճակի մասին ձեռք բերված տեղեկությունները, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

13.6.3. կազմել ապահովագրական ակտ Ապահովադրի (Շահառուի) կողմից բոլոր համապատասխան փաստաթղթերի հիման վրա համաձայն սույն Պայմանների 14.1. - 14.2. կետերի,

13.6.4. ապահովագրական ակտը կազմելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում սույն պայմաններում նախատեսված ժամկետներում:

13.7. Ապահովագրողը ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ իրավունք ունի.

13.7.1. պահանջելու իր ներկայացուցիչների՝ պատահարի վայր ազատ մուտքը և համապատասխան փաստաթղթերի ստանալը՝ վնասի բնույթը, հանգամանքները և չափը որոշելու համար,

13.7.2. մասնակցելու ապահովագրված գույքի պահպանման և փրկելու աշխատանքներին, Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական պատահարի հետևանքները նվազեցնելու խորհուրդներ տալ,

13.7.3. ինքնուրույն պարզել վնասի պատճառներն ու հանգամանքները, որոշել հատուցման չափը, ինչպես նաև հարցումով դիմել համապատասխան մարմիններին՝ վնասի չափը և պատահարի պատճառները հաստատող փաստաթղթեր և տեղեկություններ տրամադրելու համար,

13.7.4. սկսել պատահարի վայրի գնությունը, առանց սպասելու վնասի մասին ծանուցում ստանալուն, եթե Ապահովագրողը նման պատահարի մասին ունի տեղեկատվություն: Ապահովադրի (Շահառուն) իրավունք չունի Ապահովագրողին խոչնդոտներ ստեղծել, ընդ որում Ապահովադրի (Շահառուն) պատասխանատվություն չի կրում Ապահովագրողի ներկայացուցիչների՝ հետաքննության պահին հավանական կյանքի, առողջության կամ գույքի վնասի համար,

13.7.5. քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով – ներկայացնել Ապահովադրի (Շահառուի) շահերը՝ երրորդ անձանց կողմից առաջադրված պահանջները կարգավորելիս, վարել նրա անունից բանակցություններ, հայտարարություններ անել, պայմանագրեր կնքել, իր վրա վերցնել և իրագործել Ապահովադրի անունից և կողմից կարգադրությունները, արբիտրաժային, դատական և այլ մարմինների պահանջով գործեր վարել, ինչպես

նաև վիճարկել երրորդ անձանց կողմից ներկայացված պահանջի չափը օրենսդրությամբ սահմանված կարգով,

- 13.7.6. Մույն Պայմանների 13.7.1. – 13.7.5. կետերով նախատեսված Ապահովագրողի գործողությունները հիմք չեն հանդիսանում հատուցում կատարելու պարտավորության համար:

14. Ապահովագրական հատուցման իրականացման կարգը և պայմանները

- 14.1. Ապահովագրական հատուցում տրամադրելու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը.

14.1.1. ապահովագրության պայմանագիր,

14.1.2. ապահովագրական հատուցման պահանջի վերաբերյալ գրավոր դիմում,

14.1.3. տեղի ունեցած պատահարին վերաբերող փաստաթղթեր, որոնք կազմվել են Ապահովադրի (Շահառուի) կողմից, ինչպես նաև եզրակացություններ, ակտեր, կարգադրություններ՝ պետական լիազոր մարմինների կողմից,

14.1.4. սույն Պայմանների կետեր 3.2.1. – 3.2.4. նշված օբյեկտի ապահովագրության՝ շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում, ինչպես նաև հետգործարկային երաշխիքային սպասարկման ապահովագրության (չնախատեսված ծախսեր, որոնք ծագել են երաշխիքային սպասարկման ընթացքում՝ համաձայն սույն Պայմանների կետ 3.2.6.ի)

ա/ որոնք հաստատում են Ապահովադրի (Շահառուի) ապահովագրված գույքի նկատմամբ ունեցած շահերը,

բ/ որոնք հաստատում են պատահարի օրվա ընթացքում կատարված շինմոնտաժային աշխատանքների փաստացի ծավալն ու արժեքը (աշխատանքների մատյանից գրառումներ, կատարված աշխատանքների գնի մասին տեղեկանքներ, ստորագրված կապալառուի և պատվիրատուի կողմից, որոնցում արտացոլվում է կատարված աշխատանքների ծավալն ու գինը և այլն),

գ/ վնասված կամ կործանված գույքի ցանկը, ինչպես նաև պահպանված և փրկված գույքի ցանկը, որոնցում նշված է ապահովագրական պատահարի օրվա գույքի արժեքը,

դ/ տեղեկանքներ, ակտեր, արձանագրություններ, վճիռներ, որոշումներ, որոնք տրվել են համապատասխան մարմինների (լիազորված անձերի) կողմից, որոնցում ամբողջովին նշված են՝

- պատարարի վայրը, ժամը, օրը, հանգամանքները և պատճառները, վնասված (կորած) ապահովագրված գույքի անվանումը, վնասի ցանկը և բնույթը,
- ապահովագրված գույքի ամբողջական անվանումը,

- իրավախախտման էությունը և գործով կայացված վճիռը՝ վարչական բռնագանձման մասին(վարչական իրավախախտման ժամանակ), կամ իրավունքի նորմերը, ըստ որոնց հարուցվել է քրեական գործ, այլ տեղեկություններ, որոնք համաձայն իրավունքի նորմերի պետք է լինեն համապատասխան փաստաթղթերում,
- օրենքի նորմեր, ըստ որոնց հարուցվել է քրեական գործ կողոպուտի, թալանի, ավազակության հատկանիշներով,

ե/ օթերևութաբանական ծառայության կողմից տրված փաստաթղթեր, որոնք հաստատում են աղետի բնույթը և ամսաթիվը,

զ/ վթարի հետաքննության ակտեր՝ տրված պետական (տեղամասային) հանձնաժողովների կողմից՝ նշելով նրա ամսաթիվը, պայմանները, պատճառները և հետևանքները ,

է/ շինմոնտաժային աշխատանքների արժեքի մասին (շինմոնտաժային աշխատանքների ծախսերի նախահաշվարկը, նյութերի մատակարարման ծախսեր, և այլն):

14.1.5. երրորդ անձանց նկատմամբ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության համար՝

ա/ երրորդ անձանց կողմից վնասի հատուցումը պահանջելու գործով դատական վճռի պատճենը, եթե վեճը անցել է դատական կարգով,

բ/ փորձագիտական կամ այլ կազմակերպությունների կողմից տրված, որոնք թույլ են տալիս որոշել վնասի հանգամանքները և չափը, այդ թվում.

- փաստաթղթեր, որոնք հաստատում են շինմոնտաժային աշխատանքների կամ երաշխիքային սպասարկման իրագործման և տուժածների կյանքին, առողջությանը և գույքին վնասելու պատճառահետևանքային կապը,

- տուժածների կյանքին և առողջությանը վնաս պատճառելու դեպքում – առողջապահական հաստատություններից տեղեկանք, առողջապահական-սոցիալական փորձագիտական հանձնաժողովի, առողջությանը հասցված վնասի չափը կամ մահվան պատճառը, ՔԱԳԾ-ն կողմից տրված տուժածի մահվան տեղեկանքը, հողարկավորման ծախսերի տեղեկանքը, փաստաթղթեր կերակրողին կորցնելու փաստի հատուցման հետ կապված և այլ,

- տուժածների գույքի վնասի դեպքում- փաստաթղթեր, որոնք սահմանում են վնասված կամ կորած գույքի արժեքը, վերանորոգման աշխատանքների ծախսերը և այլն,

զ/ որոնք հաստատում են կատարված ծախսերը, համաձայն սույն Պայմանների 4.4 կետ -ի, եթե այդպիսիք Ապահովագրության պայմանագրով ենթակա են հատուցման,

14.1.6. որոք հաստատում են վնասի հետ կապված ծախսերի նվազեցման աշխատանքները

14.2. Ապահովագրողն իրավունք ունի ներկայացված փաստաթղթերը բավարար համարելով՝ ինքնուրույն որոշել վնասի չափը և տեղի ունեցած դեպքը ապահովագրական պատահար որակել,

Ապահովագրողը գրավոր դիմումի հիման վրա իրավունք ունի Ապահովադրից

(Շահառուից) և(կամ) այլ լիազոր մարմիններից պահանջել հավելյալ փաստաթղթեր , որոնք թույլ կտան եզրակացություն կազմել վնասի պատճառների, պայմանների և հետևանքների մասին,

Եթե կատարված պատահարի գործով դատավարություն է նշանակվել, ապա ապահովագրական հատուցման մասին որոշումը կարող է կայացվել դատավարության կամ հետաքննության ավարտից և Ապահովագրողին համապատասխան փաստաթղթերը փոխանցելուց հետո:

14.3. Սույն Պայմանների 14.1-14.2 կետերում նշված բոլոր փաստաթղթերն և տեղեկություններն ստանալուց հետո Ապահովագրողը կազմում է ապահովագրական ակտ և համաձայն Ապահովագրության Պայմանագրի կատարում է ապահովագրական հատուցում: Ապահովագրական հատուցման չափը և կարգը նշվում է ապահովագրական ակտում:

14.4. Ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է ապահովագրական ակտի կազման օրվանից տասնհինգ օր անց, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:

14.5. Ապահովագրության հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կողմից ստացված փաստաթղթերի հիման վրա և, անհրաժեշտության դեպքում, ներգրավելով անկախ փորձագետներ:

14.6. Սույն Պայմանների 3.2.1.-3.2.4. կետերում նշված օբյեկտի ապահովագրության մասով շինմնտաժային աշխատանքների կատարման ընթացքում ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել օբյեկտներին պատճառված իրական վնասի չափը,բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարը:

Վնասի և ապահովագրական հատուցման չափը որոշվում են հետևյալ կերպ՝

14.6.1. վնասի հաշվարկի մեջ ընդգրկվում են միայն այն ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի պատճառով և միայն այն առարկաներով և մասերով, որոնք նշված են եղել ապահովագրական գումարի մեջ,

14.6.2. ապահովագրված գույքի վնասի կամ կործանման դեպքում ապահովագրական հատուցումը սահմանվում է նրա փոփոխության կամ իրական արժեքի չափով՝ ապահովագրական պատահարի պահին (կախված այն բանից, թե որ գումարն է առավել նվազը), բայց ոչ տվյալ գույքի Ապահովագրական գումարից ավելին: Ապահովագրական հատուցման գումարից հանվում է այն մնացորդների գումարը, որոնք պիտանի են հետագա օգտագործման կամ իրացման համար, եթե այդպիսիք գոյություն ունեն,

Կործանում է համարվում, եթե տվյալ պահին ապահովագրական պատահարի հետևանքով վնասված գույքը վերականգնման ենթակա չէ կամ վերականգնման ծախսերը հավասար կամ ավելին են վնասված գույքի իրական արժեքից:

14.6.3. ապահովագրված գույքի վնասման դեպքում ապահովագրական գույքի հատուցումը սահմանվում է նրա վերանորոգման ծախսերի գումարի չափով, որն անհրաժեշտ է ապահովագրական պատահարից առաջ գույքի նախկին վիճակը վերականգնելու համար, բայց ոչ ավելին, քան ապահովագրական գումարն է (հատուցման սահման) և ապահովագրական պատահարի պահին վնասված գույքի իրական արժեքն է.

ա/ գույքի վերականգնման ծախսերի մեջ չեն ներառվում՝

- ապահովագրված գույքի փոփոխման կամ բարելավման հետ կապված ծախսերը,
- սարքավորման վերակափոխման հետ կապված ծախսերը, նրա պրոֆիլակտիկ վերանորոգման և սպասարկման, ինչպես նաև այլ ծախսեր՝ ապահովագրական դեպքից անկախ վերանորոգման հետ կապված,

բ/ ծախսերը կապված նախնական վերանորոգումների հետ հատուցվում են միայն այն դեպքում, եթե այդ վերանորոգումը ամբողջական վերանորոգման մասն է կազմում և, եթե սրա հետ կապված ծախսերը չեն գերազանցում վերանորոգման ընդհանուր ծախսերին,

գ/ ծախսեր կապված արտաժամյա աշխատանքի վճարումների հետ՝ կիրակի կամ հանգստյան օրերի աշխատանքների, գիշերային ժամերի, ինչպես նաև ապահովագրական դեպքի վերացման համար հատուցվում են միայն այն դեպքում, եթե այդ ծախսերի հատուցումը նշված է ապահովագրության պայմանագրում: Նշված ծախսերը հատուցվում են հատուցման գումարի սահմաններում:

14.6.4. Եթե Ապահովադիրը (Շահառուն) շարունակում է օգտագործել գույքը, որը ապահովագրական պատահարից հետո վերանորոգման կարիք ունի, Ապահովագրողը հատուցում է վնասի այն մար, որը այդ շահագործումից չի բխել:

14.7. Երրորդ անձանց համար քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով հատուցումը իրականացվում է այն չափով, որը նախատեսված է գործող օրենսդրության հատուցման վճարման սահմաններում՝ տվյալ վնասի տեսակի համար, բայց ոչ ավելի, քան Ապահովագրական գումարը:

14.7.1. Ապահովագրողի, Ապահովադրի և տուժածի միջև հատուցման չափի վերաբերյալ անհամաձայնության դեպքում հարցը կարգավորվում է դատական կարգով:

14.8. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ Ապահովագրական գումարի սահմաններում ապահովագրական հատուցումն կարող է ներառել.

14.8.1. երրորդ անձանց կյանքին և առողջությանը վնաս հասցնելու ապահովագրական պատահարների համար.

ա/ աշխատունակության կորստի հետևանքով տուժածի աշխատավարձից (եկամուտներից) զրկվելը, որը նախատեսված է քաղաքացիական օրենսգրքով,

բ/ լրացուցիչ ծախսեր, որոնք ծագել են առողջությանը վնաս պատճառելուց, այդ թվում՝ բուժման, լրացուցիչ սնունդի, դեղամիջոցների ձեռք բերման, պրոտեզավորման, ինսամքի, առողջարանային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցների ձեռք բերման, այլ մասնագիտության պատրաստման, եթե հաստատվում է, որ տուժածը ունի այդ միջոցների կարիքն ու անվճար ստանալու իրավունքը:

- Վերին վերջույթի ուսային հողակապ 70%
- Վերին վերջույթի արմնկային հողակապ 65%
- Վերին վերջույթի արմնկային հողակապից ցած 60%

- Ձեռքի դաստակի շրջանում 55%
- Բութ մատ 20%
- Ցուցամատ 10%
- Այլ մատեր 5%
- Ստորին վերջույթ՝ միջագոյրից վեր 70%
- Ստորին վերջույթ՝ մինչև միջագոյր 60%
- Ստորին վերջույթ՝ ձնկից ներքև 50%
- Ստորին վերջույթ՝ մինչև միջարունք 45%
- Ոտքի կոճ՝ 40%
- Ստորին վերջույթի բութ մատ՝ 5%
- Ստորին վերջույթի այլ մատեր՝ 2%
- Աչք՝ 50%
- Մեկ ականջի լսողություն՝ 30%
- Հոտի զգացողություն՝ 10%
- Համի զգացողություն՝ 5%

զ/ համաձայն քաղաքացիական օրենսգրքի հատուցում է տրամադրվում այն անձանց, ովքեր զրկվել են կերակրողից,

դ/ տուժածի մահվան դեպքում հուղարկավորման ծախսերի հատուցում, սակայն Պայմանագրով կարող է նախատեսվել նաև, որ հատուցումները վճարվեն համաձայնեցված Ապահովագրական գումարի չափով:

14.8.2. Երրորդ անձանց գույքի վնասի հատուցում,

ա/ ապահովագրական պատահարի պահին գույքի իրական արժեքը՝ չհաշված այն մասերի արժեքը, որոնք հետագա օգտագործման համար պիտանի են,

բ/ վնասված գույքի վերականգնման ծախսեր. վերանորոգման ծախսեր են համարվում այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են նյութերի և պահեստային մասերի ձեռք բերման համար, և որոնք իրականացվել են վերանորոգման/վերականգնման աշխատանքների համար,

14.8.3. Բացի այդ, եթե դա նշված է Պայմանագրում, քաղաքացիական պատասխանատվության սպսիտագրությամբ հատուցվում են.

ա/ անկախ փորձաքննության ծախսերը, որն իրականացվել է երրորդ անձանց հասցված վնասի չափն ու հանգամանքները որոշելու նպատակով,

բ/ դատական ծախսերը, բացառությամբ ներկայացուցիչների (իրավաբանների) ծախսերի,

14.9. Հետգործարկային երաշխիքային պարտավորության (չնախատեսված ծախսեր, որոնք ծագում են երաշխիքային սպասարկման ընթացքում) մասով, ապահովագրության հատուցումը չի կարող գերազանցել վնասի վերացման ծախսերը Ապահովագրական գումարի սահմաններում: Վնասի ծավալը և հատուցման չափը սահմանվում են հետևյալ կերպ.

14.9.1. վնասի հատուցման չափը որոշում է Ապահովագրողը՝ ելնելով փաստացի վավերացված և հաստատված (վնասի վերացման) կամ վնասված (կործանված) օբյեկտի փորձագիտական քննության արդյունքներից, եթե փորձագիտական քննությունը նախատեսված է Ապահովագրության պայմանագրով,

14.9.2. հատուցումը ապահովագրված օբյեկտի կործանման համար, որոշվում է նրա փոխարինման ծախսերի չափով կամ նրա, ապահովագրական պատահարի պահին,

իրական արժեքի չափով, բայց ոչ ավել քան օբյեկտի Ապահովագրական գումարն է: Հատուցման գումարից հանվում է այն մնացորդների գումարը, որոնք հետագա օգտագործման համար պիտանի են՝ նրանց առկայության դեպքում,

14.9.3. վնասված օբյեկտի համար հատուցումը սահմանվում է այն չափով, որը բավարար է օբյեկտը՝ նախքան պատահարի վիճակին բերելու համար, բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարն է և վնասված օբյեկտի իրական արժեքը՝ ապահովագրական պատահարի պահին:

Եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով, ապա վնասի չափի նվազեցման ծախսերը, որոնք պետք է հատուցվեն Ապահովագրողի կողմից, հատուցվում են վնասված ապահովագրած գույքի Ապահովագրական գումարի 2 տոկոսի չափով:

14.10. Բոլոր ապահովագրական պատահարների համար ամբողջական ապահովագրական հատուցումները չեն կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված Ապահովագրական գումարը:

14.11. Սույն Պայմանների 14.6. կետով նախատեսված հատուցումները կատարվում են Ապահովադրին (Շահառուին):

14.12. Սույն Պայմանների 14.8.1., 14.8.2. կետերով նախատեսված հատուցումները տրվում են տուժածներին; Եթե տուժածը մահացել է հատուցումը տրվում է այն անձանց, ովքեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքով այդ հատուցման իրավունքն ունեն:

14.13. Արտարժույթին համարժեք հատուցումը իրականացվում է ՀՀ դրամով հատուցման օրվա ՀՀ ԿԲ կուրսով, բայց ոչ ավելին, քան տարադրամի առավելագույն կուրսն է:

14.14. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ պարզվի, որ ապահովագրության օբյեկտը նույնատիպ ռիսկերից ապահովագրված է այլ Ապահովագրական ընկերություններում, ապա ապահովագրողներից յուրաքանչյուրը հատուցում է կատարում Պայմանագրում նշված ապահովագրական ընդհանուր գումարի հարաբերությամբ տվյալ ռիսկին վերաբերող Ապահովադրի կողմից կնքած բոլոր պայմանագրերում:

14.15. Եթե Ապահովադիրը (Շահառուն) մեղավոր անձանց կողմից հատուցում է ստացել ապահովագրված գույքի վնասի, կործանման համար, ապա Ապահովագրողը հատուցում է միայն Ապահովագրության պայմանագրում նշված գումարի և այդ անձանց կողմից Ապահովադրի ստացված գումարի տարբերությունը: Այս գումարները ստանալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պետք է տեղեկացնի Ապահովագրողին: Այն դեպքում, երբ Ապահովադրին (Շահառուն) վերադարձվել է գողացված գույքը, Ապահովադիրը պարտավոր է վերադարձնել Ապահովագրողին գույքի դիմաց ստացված հատուցման գումարը: Ընդ որում, եթե գույքին վնաս է հասցվել, ապա վերադարձված գումարից հանվում է այդ վնասի գումարը:

14.16. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է վերադարձնել Ապահովագրողին հատուցված գումարը, եթե օրենսդրությամբ նախատեսված հայցի վաղեմության ժամկետներում հայտնաբերվի որևէ հանգամանք, որը լիովին կամ մասնակիորեն զրկում է հատուցման իրավունքից:

14.17. Եթե ապահովագրավճարի վճարման հերթական ժամկետը անցել է և տեղի է ունեցել Ապահովագրական պատահար, ապա Ապահովագրողը հատուցման չափը որոշելու ժամանակ իրավունք ունի հանել հատուցումից այն գումարը, որը ենթակա էր վճարման:

14.18. Ապահովագրական հատուցումից հետո Ապահովագրողին է անցնում է Ապահովադրի (Շահառուի) կամ տուժածի (քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ) մեղավոր անձից հատուցումը պահանջելու իրավունքը:

14.19. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել հատուցումից, եթե Ապահովադիրը (Շահառուն)՝

ա/ չի կատարել իր վրա դրված՝ սահմանված ժամկետներում ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնելու պարտականությունը և եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին տեղեկացվել է ապահովագրական պատահարի մասին կամ Ապահովագրողի մոտ այդ մասին տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցման վճարման վրա,

բ/ կանխամտածված չի ձեռնարկել որևէ միջոց վնասի չափը նվազեցնելու համար,

գ/ չի փոխանցել Ապահովագրողին բոլոր փաստաթղթերը՝ պահանջի իրավունք ունենալու համար (սուբրոգացիա):

դ/ կատարել է վնասված գույքի վերանորոգումը՝ մինչև Ապահովագրողի հետաքննությունը, ինչը, համաձայն սույն Պայմանների, չի թույլատրում հստակ սահմանել ապահովագրական պատահարը և վնասի չափը:

ե/ Չի հետևել կամ խախտել է սույն Պայմանների կետեր 13.2., 13.3.-ի պայմանները,

14.20. Ապահովագրողի՝ հատուցման պահանջի մերժման մասին Ապահովադիրը պետք է տեղեկանա գրավոր կերպով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

14.21. Ապահովագրական հատուցման մերժման որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով:

15. Վեճերի լուծման կարգը

15.1. Ապահովագրական պամանագրի վերաբերյալ, Ապահովադրի և Ապահովագրողի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների ճանապարհով:

15.2. Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով, համաձայն ՀՀ գործող օրենսդրության: